

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2025թ. ապրիլի 6-12-ը Համաշխարհային մաքսային կազմակերպության Մաքսային արժեքի տեխնիկական կոմիտեի 60-րդ նիստին մասնակցելու նպատակով ք. Բրյուսել իրականացված գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անունը, ազգանունը.

Արփի Ավետյան՝ ՀՀ ՊԵԿ Հետբացթողումային հսկողության և ստուգումների վարչության մաքսային գործարքների հսկողության և ռիսկերի վերլուծության բաժնի պետի տեղակալ

Տիգրան Բակլաչյան՝ ՀՀ ՊԵԿ ԱՏԳ մաքսային սպասարկման և հսկողության վարչության մաքսային գործառնությունների սպասարկման թիվ 1 բաժնի պետի տեղակալ

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Համաշխարհային մաքսային կազմակերպություն, Բելգիայի Թագավորություն, ք. Բրյուսել, **2025թ. ապրիլի 6-12-ը**

3. Հրավիրող կողմը.

Համաշխարհային մաքսային կազմակերպության Մաքսային արժեքի տեխնիկական կոմիտե՝ ՄԱՏԿ (TCCV)

4. Գործուղման նպատակը

Մասնակցությունը համաշխարհային մաքսային կազմակերպություն Մաքսային արժեքի տեխնիկական կոմիտեի 60-րդ նիստին, որի նպատակն է պարբերաբար քննարկել ապրանքի մաքսային արժեքի որոշման, Համաձայնագրի դրույթների միանման կիրառման հիմնահարցերը և դրանցից բխող համապատասխան որոշումների ընդունումը

5. Քննարկված թեմաները.

Հոդված 1-ի՝ գործարքի արժեքը այն դեպքում, երբ առկա է փոխկապակցվածություն

Համաձայն Համաձայնագրի Հոդված 1-ի՝ գործարքի արժեքը կարող է ընդունվել որպես մաքսային արժեք, եթե գնորդը և վաճառողը կապված չեն, կամ եթե կապված են, բայց այդ կապը չի ազդում գնին:

Քննարկվել են մի շարք գործարքներ և բերվել դրանց օրինակներ, թե ինչ լրացուցիչ տեղեկություններ և մեթոդներ են օգտագործվում անդամ պետությունների կողմից ապրանքների մաքսային արժեքները հնարավորինս գործարքի գնի մեթոդով հաշվարկելու համար, օրինակ.

Հարկային մարմինների կողմից իրականացված տրանսֆերային գնագոյացման ուսումնասիրության արդյունքում մաքսային մարմինները իրականացրել են գնորդ-մատակարար փոխկապակցվածության ուսումնասիրություն, պարզելու համար փոխկապակցվածությունը արդյոք ունեցել է ազդեցություն ներմուծվող ապրանքի արժեքի վրա:

Քննարկվել են նաև ապրանքների համար վճարված կամ վճարման ենթակա գումարի տարածամկետ վճարման կամ այլ մեթոդներով վճարման դեպքեր և փոխանակվել միջազգային փորձով: Երկրների կողմից բերվել են օրինակներ, երբ գործարքի կողմերից մեկը միակողմանի խզել է պայմանագիրը, սակայն պայմանագրով սահմանված վճարված կամ վճարման ենթակա գումարը չի դադարել հանդիսանալ մաքսային արժեքի բաղկացուցիչ մաս՝ գործարքը իրականացրած մյուս կողմի համար:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

5-րդ կետում նշված բոլոր թեմաներով իրականացվել են խորացված քննարկումներ, որի ընթացքում բոլոր անդամ պետությունները ներկայացրել են իրենց տեսակետները, դիտողություններն ու առաջարկությունները՝ բարձրացված հիմնահարցերի վերաբերյալ: Յուրաքանչյուր հարցի վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Մաքսային արժեքի գործարքի գնի կիրառման առանձնահատկությունները վճարված կամ վճարման ենթակա գնի բաղկացուցիչ , տրանսֆերային գնագոյացման և փոխկապակցվածության վերաբերյալ հիմնահարցի կարգավորման ուղղությամբ ՀՄԿ ՄԱՏԿ կողմից ընդունվել է համապատասխան որոշում և խմբագրվել թվով 3 պաշտոնական պարզաբանումներ. վերջինս կիրառարակվի ՀՄԿ 3 պաշտոնական լեզուներով և կստանա իրավական ուժ:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Միջոցառմանը մասնակցելը թույլ տվեց ՊԵԿ ներկայացուցիչներին բարձրացնել ՀՀ ՊԵԿ-ում կատարվող համապատասխան աշխատանքների որակը, նույնականացնել լավագույն միջազգային փորձը՝ ՀՀ-ում ներդնելու նպատակով, ներկայացնել և ավելի ճանաչելի դարձնել Հայաստանի փորձը միջազգային փորձագիտական հանրույթում, հաստատել միջազգային կապեր համապատասխան ոլորտի օտարերկրյա գործընկերների և փորձագետների հետ: Մաքսային արժեքի տեխնիկական կոմիտեի նիստերի մասնակցությունը կարևորվում է հատկապես մաքսային արժեքի հսկողության նոր գործիքակազմերի, մաքսային արժեքի թերիայտարարագրումները բացահայտելու նոր մեթոդների ուսումնասիրության առումով: Հաշվի առնելով անդամների լայն մասնակցությունը իրականացվել է նաև

մաքսային արժեքի հսկողության ընթացքում ինչպես առաջավոր, այնպես էլ զարգացող պետությունների փորձի և մոտեցումների ուսումնասիրություն:

Հանդիպման ընթացքում իրականացված քննարկումների արդյունքում ՀՀ ներկայացուցիչները բարձրացրել են հարցեր կախված արտահանման մաքսատուրք ունեցող երկրների հետ իրականացրած գործարքների դեպքում մաքսային արժեքների ձևավորման ժամանակ արտահանման մաքսատուրքի՝ մաքսային արժեքում ներառման հետ կապված միջազգայն փորձի վերաբերյալ, և ձեռք բերել պայմանավորվածություն հարցը դնելու Համաշխարհային մաքսային կազմակերպության մաքսային արժեքի տեխնիկական կոմիտեի 61-րդ նիստի օրակարգում:

Համաշխարհային մաքսային կազմակերպության վարչական շենքում՝ փոքրիկ թանգարանում, ցուցադրված են ՀՄԿ անդամ պետությունների կողմից նվիրած խորհրդանշական նվերներ, որոնք վկայում են այդ պետությունների և ՀՄԿ-ի բարեկամության մասին: Աշխատանքային խումբը առաջարկում է ի նշան համագործակցային և ամուր բարեկամական կապերի Համաշխարհային մաքսային կազմակերպություն հաջորդ այցի ժամանակ թանգարանին նվիրել հայկական ինքնությունը ընդգծող նվեր, օրինակ խաղաղության, համագործակցության և բարեկամության թեմատիկայով խաչքար (քանի որ աշխարհում էլ ոչ մի այլ ազգ խաչքար չունի):

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Արփի Ավետյան



Տիգրան Բակլաջյան

16"04"2025թ.